

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 6

«Ա. ՉԵԽՈՎԻ ԱՆՎԱՆ Հ 55 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-ի ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏ

2021 թվականի դեկտեմբերի 20-ին կայացավ Ա. Չեխովի անվան հ. 55 դպրոցի կառավարման խորհրդի նիստը: Նիստին մասնակցում էին խորհրդի 9 անդամներից 7-ը, Ա. Արշակյանը և Էռնա Մերոբյանը բացակայում են հարգելի պատճառով:

Օրակարգում՝

1. Ա. Չեխովի անվան հ. 55 դպրոցի գործադիր տնօրենի թափուր պաշտոնի տեղի համար մրցույթ հայտարարելու որոշում կայացնելու մասին:

Լսեցին՝ խորհրդի նախագահ Լիլիթ Մարտիրոսյանին, որը բացեց նիստը՝ հաղորդելով, որ դպրոցի գործադիր տնօրենի պայմանագրի ժամկետը լրացել է 2021թ. դեկտեմբերի 16-ին: Նա ներկայացրեց ՀՀ Կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշմամբ հաստատված «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգի» 2.1 կետի պահանջները :

Լ. Մարտիրոսյանը առաջարկեց դպրոցի տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար մրցույթ հայտարարել, կազմակերպել և անցկացնել վերը նշված ՀՀ կառավարության որոշումների հիման վրա:

Արտահայտվեցին՝ դպրոցի կառավարման խորհրդի անդամները: նրանք մեկ անգամ ևս ուսումնասիրեցին կարգը և առաջարկեցին ուշադիր հետևել ՀՀ կառավարության որոշման կետերին:

Լսեցին՝ խորհրդի անդամ Նիկոլայ Սարիբեկյանին, նա իր խոսքում նշեց, որ նպատակահարմար է մրցույթը հայտարարել փետրվարի 3-ին:

Լսեցին՝ խորհրդի անդամ Ենոք Անդրեասյանին, նա նշեց, որ նպատակահարմար է գործերն ընդունեն դպրոցի 2 աշխատակիցներ՝ Լ. Մարտիրոսյանը և Գ. Սաֆարյանը:

Կառավարման խորհուրդը որոշեց՝

Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշմամբ հաստատված «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգի» 2.1 կետի պահանջները

1. Ա. Չեխովի անվան հ. 55 դպրոցի գործադիր տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար հայտարարել մրցույթ:

2. Որոշում կայացնելու օրվանից հետո առավելագույնը 3(երեք)աշխատանքային օրվա ընթացքում խորհրդի նախագահը հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթ հայտարարելու մասին խորհրդի որոշման պատճենը և հայտարարությունը համաձայն ձևի ներկայացնի կրթության պետական կառավարման լիազորված մարմին:

3. Մրցույթ անցկացնելու մասին հայտարարությունը հրապարակվում է www.azdarar.am կայքում, Երևանի քաղաքապետարանի պաշտոնական կայքում, դպրոցի պաշտոնական կայքում՝ 03. փետրվարի 2022թ.:


4. Մրցույթին մասնակցելու հայտերն ընդունել www.azdarar.am կայքում հայտարարության հրապարակման օրվանից սկսած 15(տասնհինգ) աշխատանքային օրվա ընթացքում՝ 23. փետրվարի 2022թ. ներառյալ:

5. Մրցույթին մասնակցելու հայտերն ընդունել ուսումնական հաստատությունում խորհրդի լիազորված անդամների կողմից՝ Լ.Մարտիրոսյան, Գ. Սաֆարյան:

6. Մրցույթն անցկացնել հայտերի ընդունման վերջին օրվանից հետո 10-րդ աշխատանքային օրը՝ 10. Մարտի 2022թ.:

Դպրոցի կառավարման խորհրդի նախագահ՝

Դպրոցի կառավարման խորհրդի քարտուղար՝

 Լ. Մարտիրոսյան
Գ. Սաֆարյան